# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆ
Առաջնորդ Գուգարաց թեմի

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

2007 թվականի օգոստոսին ծննդավայրի ու Հայրենիքի կարոտով եւ հոգու ծարավը հագեցնելու պահանջով Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի հետ, առաջին անգամ ուխտավորաբար մեկնեցի Արեւմտյան Հայաստան:

Շրջելով էրգրի կիսականգուն, ավերակ ու հիմնահատակ քանդված երբեմնի հրաշակերտ վանքերով ու եկեղեցիներով, ինչպես նաեւ հնամենի քաղաքներով ու գյուղերով՝ անցյալի փառավոր, սակայն նաեւ դժնդակ պատմությունը վերապրեցինք՝ տեսնելով ու երկյուղած շոշափելով այն ամենը, ինչը դեռ պահպանում է հայի շունչն ու ոգին, հայաբույր ու հայադրոշմ է եւ կարոտյալի հույս ու հավատով է սպասում իր զավակներին:

Ուխտագնացությունը, որքան բաղձալի ու տպավորիչ, այնուհանդերձ, ծանր ապրումներ ու հիշողություններ արթնացրեց մեր հոգիներում, քանզի երկուսս էլ թե՛ հարազատ հողին էինք կանգնած եւ թե՛ օտարի. հարազատ՝ քանզի նախնիների նման, մենք եւս ծնվել ենք այդտեղ ու սնվել այդ հողի անսպառ բարիքներից, հոգու ծարավը հագեցրել տեղի անապակ ու ականակիտ աղբյուրների սառնորակ ջրով: Հողը հայրենի որքան մոտ, այնքան հեռու էր սակայն...

2007 թվականի ուխտագնացությունը ներառում էր մի քանի հանգրվաններ՝ Կարս, Անի, Վան, Աղթամար, Շատախ, Տիգրանակերտ, Մալաթիա, Ադիյաման, Արաբկիր, Էրզինջան (Երզնկա), Թերջան (Դերջան), Բաբերդ, Արդվին եւ Հոփա: Այցելեցինք հինավուրց Անի մայրաքաղաքի ավերակներ, Կարսի Ս. Առաքելոց եկեղեցի, Տեգորի, Հուսկան որդի, Վարագա, Աղթամարի Ս. Խաչ, Կարմիր, Թորդան, Ապրանք գյուղի Ս. Դանիելի վանքերն ու Ս. Գրիգոր Նարեկացու ճգնարանը, տեսանք մեր հայրենիքի ավերակ մասունքները:

### Նոր ուխտագնացություն երկու տարի անց

2009 թ. հունիս - հուլիս ամիսներին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի հետ, ի մտի ունենալով առաջին ուխտագնացության ընթացքում տեսածն ու լսածը, կրկին ուխտագնացության մեկնեցինք Արեւմտյան Հայաստան՝ այս անգամ արդեն այցելելով նաեւ Կիլիկյան Հայաստան: Առավել ընդարձակ էր երկրորդ ուխտագնացության աշխարհագրությունը: Մեկ ամիս տեւած շրջագայության ընթացքում, եղանք Արդահան, Կարս, Իգդիր, Ահլաթ (Խլաթ), Դողու Պեյազիթ (Բայազետ), Մուշ, Չենգիլի (Ս. Կարա-

պեր), Թաթվան (Դատվան), Բիթլիս (Բաղեշ), Սղերդ, Միդիաթ, Մարդին, Դերիկ, Մուսայբին (Մծբին), Ուրֆա-Խառան (Եդեսիա), Այնթափ, Քիլիս, Զեյթուն, Քըրըզիան, Մարաշ, Սամանդաղ-Վագրֆ (Մուսալեռ), Անթաքիա (Անտիոք), Իսկենդերուն (Ալեքսանդրեթ), Պայաս, Դյորթյոլ (Չորեք մարզպան), Այաս, Անավարզա, Ադանա, Միսիս (Մամեստիա), Կոռիկոս, Տարսուս (Տարսոն), Կոզան-Սիս, Կեսարիա-Կապադովկիա, Սվազ (Սեբաստիա), Դեւրիկ, Էլազըղ-Խարբերդ, Բալու, Բինգյոլ (Ճապաղջուր), Էրզրում (Կարին), Օլթի եւ Ցուսուֆելի քաղաքներում:

Ոչ միայն այցելեցինք, շրջեցինք ու լուսանկարեցինք նշված քաղաքներում ու հարակից գյուղերում դեռեւս պահպանված, բայց եւ խոնարհված բոլոր հայկական վանքերն ու եկեղեցիները, հանդիպեցինք հայոց մնացորդաց այն հատվածին, որ, բնակվելով պապենական հողում, կարողացել էր պահպանել ազգային ինքնությունը: Շատ ջերմ էր ընդունելությունը Մուսալեռան Վագրֆ հայկական գյուղում, որն ունի հարյուր քսան հայազգի բնակչություն: Այստեղ ուխտավոր սրբազան հայրերս Սուրբ Պատարագ մատուցեցինք, ինչպես նաեւ ժամերգություն կատարեցինք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում: Հանդիպեցինք ու զրուցեցինք Էլազըղում-Խարբերդում բնակվող հայերի հետ, որոնց թիվը հասնում է հիսուներկուսի: Նույն կերպ Սեբաստիայում բնակվում են վաթսունհինգ հայեր, Կեսարիայում՝ չորս, այն էլ միայն տղամարդ, Իսկենդերունում՝ ութսուն եւ Ադանայում՝ վեց: Փոքրաթիվ ու հատուկենտ հայերի հետ երկու հոգեւորականներիս զրույցն ամենուր անկեղծ էր, ջերմ, նաեւ ոչ վաղ անցյալի դաժան անցուդարձերը մեկնող պատմություններով լի:

Հուզիչ էր նրանց հետ հանդիպումը, սակայն մխիթարական, քանի որ, 1915 թվականից հետո նրանք համառորեն շարունակում էին ապրել ու արարել հենց Էրզրում՝ պահպանելով իրենց ինքնությունն ու ավանդությունները, ազգային նկարագիրը. թեեւ գրեթե հայերեն չէին խոսում, սակայն իրենց հայ լինելն արդեն իսկ չէին թաքցնում: Ավելին՝ հպարտորեն էին խոսում ազգային պատկանելության ու քրիստոնեական հավատքի մասին: Այդուհանդերձ, հայության այդ վերջին բեկորներն իրենց ինքնությունը պահպանելու, եկեղեցի ունենալու, հայերեն սովորելու եւ լուծման կարոտ գոյապահպանական բազում այլ խնդիրներ ունեին:

Գյուղական եկեղեցիներից բացի, այցելեցինք մի շարք նշանավոր վանքեր: Հակառակ գրեթե անմերձենալի ու դժվարամատչելի աշխարհագրական դիրքին՝ ուխտավորներս կարողացանք նաեւ հասնել ու աղոթել Մուշի Իքիզլեր (Խզանք) գյուղի սարերի մեջ ծվարած Աղբրիկ վանքում:

Եղանք Մշո (Չենգելի) հռչակավոր Ս. Կարապետ, Մշո (Քեփենեկ) Ս. Առաքելոց, Վանի հարավային ափին գտնվող Արծվաբեր (Ալթըն Սաչ) վանքերում, Դեղիրմեն Ալթը (Փոր) գյուղի Նարեկ եկեղեցում, ուր վաղ միջնադարի գլուխգործոց մեծադիր խաչքարերի հանդիպեցինք նաեւ գյուղից դուրս գտնվող մեկ այլ վանքում: Էլազըղի ճանապարհին այցելեցինք Շահին Քայա գյուղի մոտ գտնվող Հուլե կոչվող վանքը: Միդիաթի եւ Մարդինի ասորական վանքերում հյուրընկալվեցինք հոգեւոր առաջնորդների կողմից, Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի (Մծբին) վանքում աղոթք առաքեցինք առ Աստված՝ հայցելով սրբի բարեխոսությունը, Ուրֆայում այցելեցինք Հոբ Երանելուն եւ Հայր Աբրահամին նվիրված սրբավայրեր:

Զարմանալի զուգադիպությամբ ես եւ Միքայել Սրբազանը հոգելույս Տ. Ներսես արք. Պոզապալյանի մահվան օրը վերջինիս ծննդավայր Քըրըզիանում (Անտիոքի շրջան) էինք,

ուր եւ տեղի անտանիք եկեղեցում հոգեհանգիստ կատարեցինք. հենց այս՝ այժմ արդեն խոնարհված աղոթատանն է մկրտվել լուսահոգի սրբազանը: Ապա եղանք Անտիոքի Ս. Պողոս առաքյալի եկեղեցում, Տարսոնում՝ Պողոս առաքյալի ծննդավայրում ու ջրհորի մոտ, ինչպես նաեւ մյուս սրբավայրերում ու կապադովկյան նշանավոր քարայր-եկեղեցիներում: Չշրջանցեցինք հիշատակության արժանի բազում կանգուն բերդեր, պալատներ, այդ թվում՝ Կիլիկյան Հայաստանի, նաեւ Մուսա լեռան գյուղերը, Պայասի, Լամբրոնի, Վահկա, Հաճընի, Լեւոն Կլայի, Անավարզայի, Կոռիկոսի եւ Սսի բերդերը. Սսում տեսանք Ս. Սոֆիայի տաճարի ավերակներն ու բազմաթիվ կամուրջներ: Ցավոք, վերոնշյալ հայկական բոլոր վանքերն ու եկեղեցիները, որոշ բացառություններով, գրեթե ավերակ էին, կամ հատուկենտ քարեղեն վկայություններ էին մնացել դրանցից:

Զարմանալիորեն կանգուն եւ անհամեմատ լավ վիճակում էին Էրզրումի շրջանի (Տայքի) հայ քաղկեդոնական վանքերն ու եկեղեցիները: Վանքերի մոտ տեղադրված ցուցանակներում գրեթե ճշգրիտ գրված էին տվյալ վանքի՝ հայերին պատկանելու մասին պատմական տվյալները: Մեր զարմանքը ի չիք դարձավ, երբ հասկացանք, որ այդ տարածաշրջանների բնակիչների մի սփվար հատված իսլամացած վրացիներ են: Եվ ցուցատախտակներում գրվածքը ուղերձ էր նրանց, որ այս արժեքները հայերինն են, ոչ թե վրացիներինը, որպեսզի այլ ակնկալիքներ չունենան: Տարածաշրջանի վանքերից էին ինչպես, օրինակ, Ցուսուֆելի մոտ« Բաղբաշ գյուղում, Հահոյի եկեղեցին, Օշքի շքեղ վանքը, Իշհան (Իշխան) վանքը, Օլթիի ռուսական եկեղեցին: Զարմանահրաշ ու ազդեցիկ էր Փենեք (Բանակ) գյուղի զվարթնոցատիպ եկեղեցին, թեեւ ավերակ, բայց եւ հիշատակության արժանի: Տեսանք նաեւ Ցուսուֆելիի մոտ Բարհալի, Դյորթ Քիլիսե վանքերը, Արտանուշի բերդը եւ եկեղեցին, Բուլանըխ գյուղի Ցենի Ռաբաթ վանքը եւ այլն:

**Թուրք հասարակության պատմական հիշողությունը իննսունչորս տարի անց**

Անդրադարձ կատարելով այն վայրերին, որոնցով անցել այցելել ենք, հարկ եմ համարում առանձնակի շեշտել, որ մեզ համար անակնկալ էր ու զարմանալի, որ ամեն տեղ, ուր հին հայկական բնակավայրեր էին, գյուղերը, անկախ անվանափոխությունից, ճանաչվում էին ոչ թե նոր՝ թուրքական, այլ հին՝ հայկական անուններով: Ներկայիս բնակիչները՝ թուրք, քուրդ, արաբ, ալավի, բոլորն էլ հաստատում էին իրենց գյուղերի հայկական լինելու փաստը: Դեռ ավելին՝ նրանցից գրեթե ոչ մեկը չհերքեց ու չդրժեց 1915 թվականի եղելությունները (օլայլար) կամ ջարդերի (քաթլիամ) փաստը: Զարմանալի էր անգամ այն, որ ոմանք նույնիսկ ցեղասպանություն (սոյ քրըմ) արտահայտությամբ էին բնորոշում 1915 թվականի Մեծ եղեռնը:

Բացառություններ կային, սակայն ի դեմս հատուկենտ բնակավայրերի բնակչության, որտեղ հայերը դիմադրություն են ցուցաբերել ու ինքնապաշտպանական կռիվներ մղել, եւ կամ այն եկվորների, ովքեր վերաբնակեցված էին եւ տվյալ հողը, այսինքն՝ բնակության վայրը, կորցնելու վախի հոգեբանական դրսեւորումներ էին ցուցաբերում, կտրուկ դրժում ու մերժում էին անգամ իրենց գյուղում փաստացի գոյություն ունեցող հայկական վանքերից ու եկեղեցիներից մնացած քարեղեն վկայությունների՝ հայերին պատկանելու փաստը: «Այս-

տեղ մենք ապրել ենք դարեր շարունակ, սա մեր հողն է»,- ասում էին գեղջուկները: Դա եւս այս պարագային հասկանալի էր:

Ի դեպ, 90 տարի շարունակ Թուրքիայում 1915 թ. հայերի ցեղասպանությունը ժխտող պետական քարոզչությունը, կարելի է ասել, նվազագույն արդյունք է տվել, այն էլ պատմությունը չիմացող խավի մեջ, եւ կամ նրանց, ովքեր վերաբնակեցված էին նախկին հայկական բնակավայրերում: Բնականաբար, հասկանալի էր նաեւ պետական պաշտոնյաների կեցվածքը. օրինակ, մի թուրք ոստիկան, երբ մեզ կանգնեցրեց երթեւեկության կանոնները խախտելու պատճառով, ծանոթանալով մեր հայկական անձնագրերին, հեգնական տոնով ասաց. «1915 թվականը ձեզ դաս չեղա՞վ: Ինչ գործ ունեք այստեղ»: Այնպես որ՝ թեեւ պետական պաշտոնյաներն անմիջական կրողն ու քարոզողն են ժխտողական անհեռանկար ու անտրամաբանական քաղաքականության, սակայն երբեմն նաեւ նրանց բերանից է հնչում ճշմարտությունը: Ասվածը փաստում է նաեւ վերջերս Բրյուսելում Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլի խոստովանությունը. «Եթե հայերն ու հույները շարունակեին (գոյատեւել) երկրում, մի՞թե մենք այսօր կունենայինք ազգային պետություն»:

Հակառակ հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի որդեգրած ժխտողական դիրքորոշմանը՝ փաստ է, որ տեղաբնակները՝ պապից թոռ, տեղեկացված էին հայերի հետ պատահածի, նրանց թողած արհեստների, մշակույթի, կենցաղի, տեղանունների, վանքերի ու եկեղեցիների մասին: Գրեթե յուրաքանչյուր գյուղում հիշվում էին հայերի անուններն ու նրանցից իրենց հասած արհեստները: Նաեւ ճանաչում էին այն մարդկանց, ովքեր դավանափոխ (դյոնմե) էին դարձել կամ որոնց մեծ մայրերը հայ էին եղել:

Ուշագրավ մի փաստ եւս անչափ հուզել էր ուխտավոր հոգեւորականներիս: Դեւրիկից Արաբկիր տանող ճանապարհին հանդիպեցինք Քոնակ գյուղում բնակվող երկու կանանց. նրանցից մեկն ութսունին մոտ էր, իսկ ուղեկիցը հարսն էր՝ հիսունհինգ տարեկան: Մեզ առանձնապես զարմացրեց նրանց անկեղծ ու հուզախառն խոստովանությունը: Վերջիններս, մատնացույց անելով դիմացի «Սարը չիչեքե» կոչվող սարը, ասացին. «Պետությունը հավաքեց այս շրջանի բոլոր հայերին ու ոչնչացրեց այդ սարի լանջին»: Իսկ նույն սարի մոտակա ճամփեզրին՝ աղբյուրի մոտ, երբ 13-15 տարեկան պատանի գեղջուկ հովվին հարցրինք, թե ի՞նչ գիտե «Սարը չիչեքե»-ի մասին, նա անմիջապես պատասխանեց. «Այնտեղ մեր զինվորները ջարդել են հայ բնակչությանը»:

Եթե փորձենք տարիների կտրվածքով համադրել մեր զրուցակիցների տեղեկացվածությունը հայ ժողովրդի եւ նրա ապրած եղեռնի մասին, ապա վստահաբար կարող ենք ասել՝ 80 տարեկան, 55 տարեկան եւ 15 տարեկան թուրք քաղաքացիները քաջատեղյակ էին: Ավելին՝ եթե այսօր 15 տարեկան հովիվը գիտե հայերի ու նրանց հետ կապարված դաժան կոտորածների մասին, վստահաբար կարող ենք հավաստել, որ այս պարագային դեռ 90 տարի եւս, եթե ոչ ավելի, հայությունը կապրի թուրքերի ու քրդերի հիշողության մեջ:

Տարբեր բնակավայրերում հաճախ էինք լսում թուրք, քուրդ կամ ալավի բնակչության ափսոսանքի խոսքերը: Նրանք կրկնում էին. «Ափսոս, հազար ափսոս... ինչ մարդամոտ, կիրթ, բանիմաց, արհեստների տիրապետող, հողի լեզուն հասկացող ժողովուրդ կորցրինք. այո՛, մի զարմացեք, կորցնողը մենք՝ թուրքերս եղանք»: Ի դեպ՝ երբ Մշո Ս. Կարապետ ավերակ վանքի մոտ կանգնած, տխուր ու անճար, դիտում էի վանքի արձանագրությունների, խաչքարերի, զարդաքանդակների բեկորները, որոնք տեղադրված էին սրբատաշ քարե-

ռով կառուցված դիմացի փան պատին, հանկարծ փանտերը (մոտ 40 տարեկան մի տղամարդ) դուրս եկավ՝ դիմելով ինձ հեռվից ինքնաարդարացնող տոնով բացականչեց. «Այդ տարիներին ես դեռ ծնված չէի, հետեւաբար մեղավոր չեմ»:

Իսկ Մուշի Քեփենեկ (Արագ) գյուղի բարձունքին գտնվող ավերված Ս. Առաքելոց վանքի մոտ մեզ շրջապատած քրդերից մեկը, տեսնելով մեր խռովահույզ վիճակը, կարծես մխիթարելու համար ասաց. «Մեր ժողովուրդը ջահիլ (այսինքն՝ անուս) է, անմիջապես ոգեւորվում է, չի կշռադատում, երկար-բարակ չի մտածում եւ անում է այն, ինչ իրեն հրամայում են: Հետո է միայն անդրադառնում կատարվածին ու զղջում»:

Ապա քուրդ խոսակիցս պատմեց, որ 1950-ականներին կառավարությունը մոտակա գետի վրա կամուրջ կառուցելու պատրվակով քրդերին խոստանում է հողահարկից ազատել, եթե նրանք Ս. Առաքելոց վանքը քանդեն, իսկ քարերը տեղափոխեն գետի ափը՝ կամրջաշինության մեջ օգտագործելու համար:

Հայաստանի անմիջական հարեւանությամբ եւ ընդհանրապես նախկին հայկական բնակավայրերում բնակիչները հիշում էին անգամ, թե ո՞ր թուրք գեներալի, վալիի (նահանգապետի), քաղաքապետի կամ գյուղապետի հրամանով են պայթեցվել կամ քանդվել իրենց գյուղերի հայկական վանքերն ու եկեղեցիները: Թերեւս դրանով էլ նրանք ցույց էին տալիս իրենց հակազդեցությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական դիրքորոշմանը՝ ժխտողականությանը: Ընդհանրապես պետք է նշել, որ Թուրքիայում չմարող ազգայնամոլության պարագային անգամ հասարակության տարբեր շերտերում նկատվում են ճեղքեր՝ ճշմարտության գիտակցման առումով:

Արդահանից հասնելով Չըլդըր լճի ափին գտնվող Աքչե Քալե (Աղջկա բերդ) գյուղ՝ 85 տարեկան մի կնոջ հարցրի, թե այս գյուղի անունը ո՞րտեղից է գալիս: Նա պատասխանեց՝ հայերից: Ես երկրորդեցի հարցս. «Մի՞թե այստեղ հայեր են ապրել»: «Այս բոլոր գյուղերը գյավուրներինն են եղել, տղա՛ս: Այ՛, այն դիմացի սարից թնդանոթներով կրակեցին Աթաթուրքի զինվորները, եւ կոտորեցինք ու դուրս քշեցինք նրանց»,- հնչեց պատասխանը: «Բայց, ա՛յ մայրիկ, գիշեր-ցերեկ հեռուստացույցով ասում են, թե թուրքերը հայերին չեն ջարդել»,-շարունակեցի ես: «Չէ՛, տղաս, չէ՛, նրանք ի՞նչ գիտեն, դու մե՛զ հարցրու»,- ասաց թրքուհին: «Բայց մի՞թե մեղք չէին հայերը»,- հարցրի: «Եթե չջարդեինք, այս գեղեցիկ երկիրը մեզ ո՞վ կտար, այսպես շատ լավ եղավ»,- ոգեւորված խոսեց Ադալեթ Քըլըչ (Արդարության սուր) անունով պառավը: Անշուշտ, այս կնոջ խոսքերը կարող էին նաեւ այլ լինել, եթե նա իմանար, որ մենք հայ ենք:

Ենթադրելի է նաեւ, որ թուրք ժողովրդի այն բարեպաշտ հատվածը, որ օրը հինգ անգամ աղոթք (նամազ) է անում մզկիթի վերածված հարյուրավոր եկեղեցիներում, եթե անգամ չի աղոթում այդ շինությունը կառուցող հայերի համար, գոնե հիշում է նրանց երբեմնի ներկայության մասին: Եւ կամ իր տունը հայկական եկեղեցու սրբատաշ քարերով կառուցած, ինչպես նաեւ հայի հիմնադրած տանը բնակություն հաստատած թուրք եւ քուրդ բնակչությունը, ամեն գիշեր անկողին մտնելիս կամ ճաշելիս, հիշում է հայերին ու զգում նրանց ներկայությունը:

Անգամ Թուրքիայի ղեկավարությունն Անկարայում ամեն օր հանրապետության նախագահի «Չանքայա» (Զանգակատուն-եկեղեցի) պալատ մտնելիս հիշում է այդ տարածքի

հայազգի փիրոջ մասին: Այս վկայակոչումների շարքն ամբողջացնում են նաեւ նախկինում հայապատկան բազում դպրոցները, ուսումնարանները, թատրոնի շենքերը, մեծահարուստ հայերի շքեղ առանձնատները, հիվանդանոցները, գործարաններն ու արհեստանոցները, անգամ հսկա կալվածքները, որոնք այսօր եւս ծառայում են թուրք ժողովրդին, եւ որոնց պատկանելության մասին «աղաղակում» են անգամ այդ բազմաբնույթ շինությունների պատերն ու քարերը:

Վկայությունները բազում էին. որքան շատ ու երկար էինք զրուցում տեղի բնակիչների հետ, այնքան ավելի ու ավելի էինք համոզվում, որ ճշմարտությունն անհնար է թաքցնել այնպես, ինչպես ասեղը չեն թաքցնի պարկում: Ժամանակի գետն ու ժամանակի հետ փոփոխվող մարդիկ որքան էլ մեղանչեն պատմության առջեւ, միեւնույն է՝ չեն կարողանա հակադրվել գենետիկ հիշողությամբ ժառանգված եւ անձնական կապով ամրագրված ճշմարտությանը:

Հետեւաբար, որպես համոզմունք, կարող ենք եւս մեկ անգամ վստահաբար ասել, որ Թուրքիայում հայերի ու հայկական վարք ու բարքի, ինչպես նաեւ ջարդերի մասին հիշողությունները հազիվ թե մոռացվեն, քանի դեռ դրանք ամրագրված են թուրքերի հիշողության մեջ եւ պահպանվում են ճիշտ այնպես, ինչպես այդ ջարդերին ու զրկանքներին զոհ դարձած հայության ժառանգների հիշողության թելերը, որոնք արմատներով կապված են այժմյան Թուրքիայի սահմաններում ընդգրկված հայրենի հողին եւ գենետիկորեն ժառանգել են ցեղասպանության բոլոր հետեւանքները: Ժողովուրդների պատմական հիշողությունն ավելին է, քան ժխտողական քարոզչությունը: Հայերը թուրք, քուրդ, ալավի, արաբ բնակչության հուշերում ամենօրյա ապրող կենդանի ներկայություն են՝ անկախ դրանց լավ կամ վատ դրսեւորումներից:

Ուստի թուրքական իշխանությունների կողմից կասկածի տակ դնել թուրք բնակչության պատմական ու հասարակական հիշողությունը՝ կնշանակի պետականորեն անվստահություն եւ արհամարհանք դրսեւորել սեփական քաղաքացիների նկատմամբ՝ վիրավորելով նրանց արժանապատվությունը, ինչը Թուրքիայում անում են ժխտողականության ջատագով պատմաբաններն ու պետական քարոզչամեքենան: Իհարկե, նույնը չէ հայ եւ թուրք ժողովուրդների ցավը, բայց նույնն է պատմական հիշողությունը:

Փաստորեն, թուրքական հասարակությունը 1915-ի իրադարձությունների առնչությամբ իրազեկման խնդիր, որպես այդպիսին, չունի: Հայոց ցեղասպանությունը պատմական անժխտելի փաստ է նաեւ նրանց համար: Պարզապես թուրք պատմաբաններն ու դիվանագետները պետք է քաջություն ունենան եւ նպաստեն երկու ժողովուրդների միջեւ առկա փոխանվստահության վերացմանը՝ առերեսվելով սեփական պատմության հետ եւ հրաժարվեն ցեղասպանության իրողությունը թուրքերի հասարակական հիշողությունից ջնջելուապարդյուն փորձերից: